

ԲԱՐԵՆԴՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մարտին Խաչիկյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«ԲԻ ԷԼ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ավագ իրավաբան, փաստաբան
martin.khachikyan@ysu.am
ORCID - 0009-0007-3262-0326

Համառոտագիր: Կորպորատիվ իրավահարաբերություններում բարեխղճությունը հիմնարար սկզբունք է, որն ապահովում է կորպորացիայի շահերի արդյունավետ իրացման գործընթացում թափանցիկությունը և արդարությունը: Այս սկզբունքը կարևոր է ոչ միայն իրավական հարաբերությունների համար, այլև կորպորացիայի շահի պաշտպանության համար: Բարեխղճությունը կորպորատիվ աշխարհում ներառում է տարբեր բաղադրիչներ՝ ազնվություն, պատասխանատվություն, հավասարություն և իրավունքի գերակայություն, իսկ կորպորատիվ գործունեության մեջ բարեխղճության հասկացությունը չի սահմանափակվում միայն օրենքներին և կանոններին հետևելով, այլ նաև ուղղված է կորպորատիվ մշակույթի և կորպորատիվ շահի պահպանմանը: Պահպանելով բարեխղճությունը՝ ընկերությունները կարող են խուսափել չարաշահումներից, խաբեությունից և անօրինական գործունեությունից: Բարեխղճությունը ապահովում է նաև կազմակերպության բարոյական հեղինակությունը և բարեփոխումներ է առաջացնում նրա աշխատանքի մեջ:

Կորպորատիվ իրավահարաբերություններում հանդես եկող սուբյեկտների վարքագծին ճիշտ իրավական գնահատական տալու անհրաժեշտությունը դարձել է առավել արդիական, քան երբևէ, ինչը պայմանավորված է ներկայումս կորպորատիվ կառավարման մշակույթի արագ զարգացմամբ և համաշխարհային տնտեսական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումներով: Ընդ որում, դատական պրակտիկայի վերլուծությունը ևս վկայում է՝ կորպորատիվ բնույթի վեճերի, այդ թվում կորպորատիվ կառավարման մարմինների կողմից անբարեխիղճ վարքագիծ դրսևորելուն իրավական ճիշտ որակում տալու անհրաժեշտության մասին:

Բանալի բառեր– իրավաբանական անձ; բարեխղճություն; անբարեխիղճ վարքագիծ; բարեխիղճ գործել; կորպորատիվ կառավարում; կորպորատիվ իրավահարաբերություններ; կորպորատիվ իրավունք:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ակտիվ զարգացման նոր փուլ են մտել կորպորատիվ բնույթի իրավահարաբերությունները, ակնհայտորեն փոփոխվել է ներդրողների վերաբերմունքը կորպորատիվ կառավարման մոդելների ընտրության հարցում, ինչպես նաև օրենսդրի կողմից կատարվում են օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված ոլորտի լավարկմանը:

Սույն հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումների համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում բացահայտել քաղաքացիաիրավական հարաբերություններում առկա բարեխղճության սկզբունքի և կորպորատիվ բարեխղճության սկզբունքի տարբերությունները, ինչպես նաև կորպորատիվ բարեխղճության սկզբունքը բնութագրող չափանիշները:

Նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել «բարեխղճություն» եզրույթի ձևավորման և զարգացման պատմությունը,
- բացահայտել կորպորատիվ իրավահարաբերություններում «բարեխղճության» սկզբունքի էությունը և դրա առանձնահատկությունները,
- բացահայտել ՀՀ դատական պրակտիկայում բարեխղճության սկզբունքի գնահատման առանձնահատկությունները,
- վեր հանել կորպորատիվ հարաբերություններում բարեխղճության սկզբունքի այն առանձնահատկությունները, որոնցով վերջինս տարբերվում է քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճության սկզբունքից:

Աշխատանքում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ անալիզ, սինթեզ, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդները:

2. Բարեխղճության սկզբունքը կորպորատիվ իրավահարաբերություններում

Բարեխղճությունն առաջին հերթին մարդու վարքագիծը բնորոշող հատկանիշ է, քանի որ դրանով կարելի է որակել անձի իրավունքների և պարտականությունների իրացման գործընթացը: Որպես մարդու վարքագիծը բնորոշող հատկանիշ՝ բարեխղճությունը ենթադրում է, որ անձը պետք է ազնվորեն մոտենա իր իրավունքների իրացման և պարտականությունների կատարման գործընթացին՝ գործելով արդարացի:

Բարեխղճությունն առանցքային դեր ունի ինչպես անձնային, այնպես էլ իրավական հարաբերություններում, առնվազն այն հիմնավորմամբ, որ բարեխիղճ վարքագիծը այն գործոնն է, որը նպաստում է երկարաժամկետ և կայուն հարաբերությունների ձևավորմանը:

«Բարեխիղճ» բառը հայ լեզվաբանների կողմից բացատրվել է հետևյալ կերպ՝ ««իր պարտականությունները ազնվորեն և պարտաճանաչ կատարող», «ջանասեր, ուշիմ», «արդարամիտ, ազնիվ, արդարադատ» և «խղճով՝ պատվով՝ ուշադրությամբ կատարված, մաքուր»»¹:

Բարեխղճության սկզբունքը որպես իրավական կատեգորիա կիրառվել է դեռևս հռոմեական իրավունքում պրետորների (praetor, praeitor) կողմից: Մասնավորապես, պրետորներն այս կամ այն հայցը սահմանելու միջոցով քաղաքացիական իրավունքը համապատասխանեցնում էին հռոմեական հասարակությունում առաջացող նոր իրավահարաբերությունների պահանջներին: Դրանց շարքին են դասվել այն հայցերը, որոնցով որոշումները կայացնելիս դատարանը պետք է առաջնորդվեր ազնվության և արդարության սկզբունքով (actiones bonae fidei)²:

Առանձին դեպքերում բարեխղճությունը որպես սկզբունք ամրագրված է նաև տարբեր երկրների օրենսդրությամբ (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքում 2012 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում³ բարեխիղճ գործելու պարտականությունը դասվել է քաղաքացիական իրավունքներն իրականացնելու սահմանները կարգավորող սկզբունքների շարքին): ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգրք)⁴ և այլ նորմատիվ իրավական ակտերով բարեխղճության սկզբունքն ուղղակիորեն իր ամրագրումը չի

¹ Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976: Հատոր 1, էջ 174:

² Ավետիսյան Վ.Ռ., «Հռոմեական մասնավոր իրավունք», Եր., Հեղինակային հրատ., 2015 թ. էջ 215:

³ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/62129e15ab0e6008725f43d63284aef0bb12c2cf/# (էլեկտրոնային հասանելիությունը 08.10.2024 թվականի դրությամբ)

⁴ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

ստացել որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների հիմնարար սկզբունք, այլ գործածվել է տարբեր իրավահարաբերություններ կարգավորող իրավադրույթներում, օրինակ՝ կորպորացիայի կառավարման մարմինների բարեխիղճ գործելու պարտականության վերաբերյալ կարգավորում է նախատեսված Օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Անձը, որն օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխիղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի: Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ԲՕ)¹ 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, (...)»:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)² 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմինն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են գործել ի շահ ընկերության՝ բարեխիղճորեն և ողջամիտ»:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ, ի լրումն այլ պայմանների, օրենսդրի կողմից սահմանվել է կորպորացիայի կառավարման մարմինների իրավունքների իրացման և պարտականությունների կատարման երկու պայման՝ բարեխիղճություն և ողջամտություն, որոնք չպահպանելը հանգեցնում է կորպորացիայի մասնակիցների պահանջով կորպորացիային պատճառված վնասի փոխհատուցման պարտականության ծագմանը:

Ուստի կորպորատիվ կառավարման մարմինները պարտավոր են գործել բարեխիղճ, ի շահ կորպորացիայի և կորպորատիվ կառավարման սկզբունքներին համապատասխան, այլապես նման վարքագիծը անխուսափելիորեն հանգեցնելու է պատասխանատվության:

ՀՀ Կառավարությունը կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառությունը խրախուսելու և կորպորատիվ կառավարման մարմինների վարքագծին ճիշտ որակում տալու նպատակով այդ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցելուն ուղղված գործուն քայլեր է ձեռնարկել դեռևս 2010 թվականից, իսկ բոլորովին վերջերս Օրենսգրքում Էկանոմիկայի նախարարության առաջարկությամբ կատարվել են փոփոխություններ, մասնավորապես 2024 թվականի մայիսի 22-ին ընդունվել է, իսկ 2024 թվականի հունիսի 8-ից ուժի մեջ է մտել Օրենսգրքում կատարված լրացումը՝ 76.1 հոդվածը՝ «Կորպորատիվ կառավարման կանոնագիրք» վերտառությամբ³:

¹ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831:

² ՀՀՊՏ 2001.12.07/38(170) Հոդ.910:

³ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենք; ՀՕ-237-Ն

Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ձևի, ներդրման, կիրարկման և այլ առանձնահատկությունների վերաբերյալ խիստ օգտակար աղբյուր է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հրապարակված G20/OECD կորպորատիվ կառավարման սկզբունքները:

Ընդ որում, համապատասխան փաստաթղթում ևս կիրառվել է «բարեխիղճ» եզրույթը մի քանի ֆորմատներով, մասնավորապես այն գերազանցապես կիրառվել է հետևյալ համատեքստում՝ «սկզբունքները կօգնեն հասցեագրել ինստիտուցիոնալ ներդրողների աճող դերը՝ խթանելով բարեխիղճ կառավարման կանոնագրքերի առաջխաղացումը և այնպիսի խորհրդատվական ծառայությունների կողմից շահերի բախման բացահայտումը, ինչպիսիք են վստահված խորհրդատուները և բնապահպանական, սոցիալական ու կառավարման ինդեքսները տրամադրողները: Սկզբունքները ներառում են նաև կորպորատիվ պարտքի աճող կարևորությունը և կապիտալի շուկաներում պարտատոմսերի սեփականատերերի դերն արտացոլող նոր առաջարկություններ»¹:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ կորպորատիվ կառավարման սկզբունքները, ի լրումն այլ գործառնությունների, ուղղված են ապահովելու բարեխիղճ կառավարման կանոնագրքերի առաջ գալուն:

Բարեխիղճ կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման գաղափարն այն է, որ կորպորացիաների կառավարման մարմինների գործողությունները, անգործությունը և այլ վարքագիծ պետք է ուղղված լինեն կորպորացիայի լավագույն շահին և հիմնված լինեն Կորպորացիայի արժեքների վրա:

Ըստ Վ. Դ. Ավետիսյանի՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության սկզբունքները կառուցված են չորս հիմնական արժեքների վրա՝

«Արդարություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է պաշտպանի բաժնետերերի իրավունքները և ապահովի հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի, այդ թվում փոքրամասնություն կազմող և օտարերկրացի բաժնետերերի նկատմամբ: Բոլոր բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան արդյունավետորեն վերականգնելու իրենց խախտված իրավունքները:

Պատասխանատվություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ճանաչի շահառու անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները և խրախուսի ընկերությունների և շահառուների ակտիվ համագործակցությունը՝ ուղղված հասարակության բարեկեցության աճին, աշխատատեղերի ստեղծմանը և ֆինանսապես առողջ ընկերությունների կայունությանը:

Թափանցիկություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ապահովի բոլոր այն էական փաստերի ժամանակին և ճշգրիտ բացահայտումը, որոնք վերաբերում են ընկերությանը, ներառյալ ընկերության ֆինանսական վիճակին, գործունեության արդյունքներին, սեփականության կառուցվածքային և կառավարմանը:

Հաշվետվողականություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է լինի ռազմավարական ուղեցույց՝ խորհրդի կողմից ընկերության կառավարման, գործադիր մարմնի գործունեության արդյունավետ վերահսկման, ինչպես նաև ընկերության և նրա բաժնետերերի առջև խորհրդի հաշվետվողականության ապահովման համար»²:

¹ https://www.oecd-ilibrary.org/governance/g20-2023_7b5dcccce-hy (էլեկտրոնային հասանելիությունը 10.10.2024 թվականի դրությամբ):

² **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), դոկտորականատենախոսություն. ԵՊՀ իրատարակչություն, Երևան 2013, էջ 282-283:

Մեր կարծիքով՝ վերոնշյալ չորս հիմնական արժեքները սերտորեն կապված են բարեխղճության հետ, քանի որ բարեխղճությունը կորպորատիվ կառավարման բաղկացուցիչ մաս կազմող տարրերից մեկն է: Ստորև առանձին կանդադառնանք վկայակոչված չորս հատկանիշների և բարեխղճության միջև կապին:

Արդարություն և բարեխղճություն. Կորպորատիվ կառավարման սկզբունքներից կարևորագույնը ընկերության կառավարման գործընթացների ընթացքում արդար գործելն է: Այսինքն՝ գործընթացները պետք է կատարվեն այնպես, որպեսզի դրանց ընթացքում չխախտվեն ինչպես կորպորացիայի սուբյեկտների, այնպես էլ կորպորացիայի հետ համագործակցող սուբյեկտների շահերը: Բարեխղճությունը ևս ենթադրում է անկեղծություն, ազնվություն ու պատասխանատվություն թե՛ կազմակերպության ներսում, թե՛ դրա արտաքին հարաբերություններում: Ուստի այդ երկուսը միմյանցից անբաժանելի են, քանի որ մի շարք դեպքերում բարեխղճ վարքագծի խախտում կհամարվի, եթե չապահովվի բոլոր կողմերի նկատմամբ արդար և հավասար վերաբերմունք: Միաժամանակ, **բարեխղճություն** նշանակում է, որ կառավարման մարմինները պետք է արդարացի ու պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերեն իրենց վարքագծի ընթացքում՝ առանց կողմնակալության կամ չարաշահման, իսկ արդարությունը, այս տեսանկյունից, ապահովում է, որ նման վարքագծի արդյունքում չլինի շահերի բախում կամ ոչ արդար վարքագիծ, որը խախտի այլ անձանց և/կամ կորպորացիայի շահերը:

Պատասխանատվություն և բարեխղճություն. այս երկու սկզբունքները միմյանց հետ կապված են, բարեխղճ վարքագիծը ենթադրում է պատասխանատվություն և հակառակը: Կորպորատիվ կառավարման մեջ դրանց համակցությունը ապահովում է վստահություն, թափանցիկություն և կայունություն: Դրա շնորհիվ հնարավոր է հասնել ինչպես կորպորացիայի կառավարման արդյունավետության ավելի բարձրացմանը, այնպես էլ կորպորացիայի նկատմամբ այլ սուբյեկտների վստահության բարձրացմանը, որը երկարաժամկետ նպատակների իրագործման հիմնական գրավական է:

Թափանցիկություն և բարեխղճություն. թափանցիկությունը և բարեխղճությունը անբաժանելի են, քանի որ առաջինը ապահովում է տեղեկատվության հասանելիությունը, իսկ երկրորդը՝ այդ տեղեկատվության արդարացի ներկայացումը: Նշվածը շատ կարևոր դեր ունի կորպորատիվ կառավարման համակարգում, քանի որ արդարացի և պարտաճանաչ կերպով տեղեկատվության հրապարակումը կարևոր է ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների, այլ նաև կառավարման ընդհանուր գործընթացների համար: Այս սկզբունքները ևս միասին ուղղակիորեն խթանում են կորպորացիայի նկատմամբ վստահության աճը:

Հաշվետվողականություն և բարեխղճություն. այս երկու արժեքները ևս անբաժանելի են և կիրառվում են նաև միասին, քանի որ հաշվետվողականությունը ենթադրում է, որ կորպորացիան և դրա կառավարման մարմինները պետք է լինեն հաշվետու շահագրգիռ անձանց մոտ, իսկ հաշվետու լինելը արդեն իսկ ենթադրում է բարեխղճ վարքագիծ, քանի որ գործել առանց այլոց իրավունքները և օրինական շահերը հաշվի առնելու և խուսափել դրա արդյունքում վրա հասնող պատասխանատվությունից, ուղղակիորեն վկայում է անբարեխղճ վարքագծի մասին:

Հաշվի առնելով ողջ վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է բացահայտել «բարեխղճություն» եզրույթի իմաստը:

«Բարեխղճություն» եզրույթը առանձին չի բացահայտվել օրենսդրի կողմից, այն գնահատողական կատեգորիա է: Ընդ որում, որոշ իրավաբան գիտնականների կարծիքով՝ բարեխղճություն եզրույթին սահմանում տալը անհնար է, և նման փորձ անելու դեպքում այն կկորցնի իր էությունը:

Ըստ անգլիացի գիտնական Մ. Մ. Բրիջի՝ «բարեխղճությունը անգլիական դատական համակարգում կիրառվում է որպես էթիկական պայման (terms implied in fact), որը քողարկվում է պայմանագրային և իրավական տարբեր ձևակերպումների

մեջ, սակայն պարբերաբար այդ սկզբունքի կիսման արդյունքում այն ներդրվել է որպես կիրառելի սկզբունք (terms implied in law)»¹

Այլ անգլիացի տեսաբաններ կարծում են, որ «բացակայում է անհրաժեշտությունը՝ «բարեխղճության» սկզբունքի սահմանումը, որպես անգլիական պայմանագրային իրավունքի հիմնարար սկզբունք, քանի որ, ըստ նրանց, Անգլիայի օրենսդրությունը ունի բավարար արդյունավետ իրավական կառուցակարգեր, որոնք հնարավորություն են տալիս վեճը լուծել առանց բարեխղճության սկզբունքի օգտագործման: Ըստ նրանց՝ այդ սկզբունքի սահմանումը կլինի անորոշ, ինչն էլ կհանգեցնի իրավակիրառ պրակտիկայում անորոշության»²:

S. Կ. Բարսեղյանը իր աշխատություններից մեկում նշել է. «Գիտական գրականությունում «բարեխղճ» կատեգորիան, որպես կանոն, հիշատակվում է իրավունքների չարաշահման դեպքում կամ բարեխղճ ծեռք բերողից գույքը հետ պահանջելիս, մինչդեռ՝ բարեխղճությունը սկզբունք չհամարելն ամենևին էլ չի նշանակում, որ օրենսդիրը չի արժևորում քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների բարեխղճության հիմնարար նշանակությունը: Վերջինս գտնում է, որ բարեխղճությունն ավելի քան սկզբունք է: Այն իրավական արժևորվածություն ունեցող բարոյաէթիկական արժեք է՝ բարոյական հրամայական, որն ընկած է իրավունքի և դրա ցանկացած սկզբունքի հիմքում: Եթե սկզբունքները (մարդկանց որոշմամբ) կարող են փոփոխվել, ապա բարեխղճությունն անփոփոխ կատեգորիա է, նրա կոնկրետ ըմբռնումը կախված է այն բանից, թե ինչպիսի կանոններ, սովորություններ և բարքեր են ձևավորվել տվյալ հասարակությունում: Բարեխղճությունն իրավակարգավորման ելակետային և հիմնարար այն կատեգորիաներից մեկն է, որի պահանջներին պետք է համապատասխանի քաղաքացիական ցանկացած իրավահարաբերություն, սուբյեկտի ցանկացած գործողություն»³:

Այսպես, ըստ Կ.Ի. Սկլովսկի՝ «bona fides (բարեխղճությունը) իրավահարաբերություններում ակնկալվող/ստանդարտ վարքն է, որը որակվում է որպես զգուշավոր վարքագիծ»⁴: Իր մեկ այլ աշխատությունում Կ.Ի. Սկլովսկին հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Բարեխղճությունը՝ որպես իրավական սկզբունք իրավահարաբերություններում ֆորմալ հավասարության և համաչափության իրավական սկզբունքի արդյունք է, որը ենթադրում է, որ իրավահարաբերությունների մասնակիցները պետք է գործեն ազնվությամբ՝ հարգելով միմյանց իրավունքները և շահերը: Այն նաև ընդգծում է կողմերի ակտիվ ներգրավվածությունը իրավական նորմերի ու սկզբունքների ձևավորման և պահպանման գործում, ինչի միջոցով իրավահարաբերություններում ապահովվում են արդարությունը և հավասարակշռությունը»⁵:

Ըստ Ա. Ա. Չուկրենի՝ «բարեխղճության սկզբունքը քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների իրականացման ընթացքում, այլ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտմանը չհանգեցնելուն ուղղված հետևողական վարքագիծն է, որը դրսևորվում է տվյալ անձի կողմից իր գործու-

¹ Bridge M. G. Does Anglo-Canadian Contract Law Need a Doctrine of Good Faith? Canadian Business Law Journal. 1984. Vol. 9. էջ 385

² McKendrick E. Contract Law. 12th ed. Palgrave Law Masters. Palgrave Macmillan, 2017. էջ 142, 159

³ S. Կ. Բարսեղյան, Բարեխղճության դերը քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման գործում, հոդված, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, ԵՊՀ, Երևան 2012, էջ 32-35:

⁴ Скловский К.И. Проблемы собственности и владения в гражданском праве России. М.: Дело, 1999. էջ. 205.

⁵ Скловский К.И. Собственность в гражданском праве. М.: Статут, 2008. էջ 768.

նեության հնարավոր բացասական հետևանքները կանխատեսելու և կանխարգելելու գործողությունների կատարմամբ և/կամ անգործության դրսևորմամբ»¹:

Վերոգրյալի վերլուծությունից բխում է, որ բարեխղճությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների հիմնարար սկզբունքներից է և ունի իր ուրույն տեղը:

Բարեխղճության սկզբունքը ունի որոշակի կանխարգելիչ դեր, քանի որ այն ապահովում է քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների արդար, ազնիվ և հավասար վարքագիծ, ինչպես նաև փոխադարձ հարգանք: Սուբյեկտները, հասկանալով այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը և այդ իրավունքների խախտման դեպքում հնարավոր պատասխանատվությունը, իրենց վարքագիծը դրսևորելու ընթացքում փորձում են կանխել նման հնարավոր դեպքերը:

Ուստի, բարեխղճության սկզբունքը, կարելի է ասել, ոչ միայն պարտադրում է, որ սուբյեկտները հետևողական վարքագիծ դրսևորեն իրենց իրավունքները իրացնելու ընթացքում, այլ նաև հաշվի առնեն տվյալ իրավահարաբերություններում մյուս կողմում հանդես եկող սուբյեկտի իրավունքները և օրինական շահերը, որն էլ կրկին հիմնավորում է, որ բարեխղճության սկզբունքը առանցքային դեր ունի քաղաքացիաիրավական հարաբերություններում՝ անկախ դրան օրենսդրորեն հստակ սահմանում տրված չլինելու փաստի:

Նման պայմաններում կարող ենք պնդել, որ բարեխղճության սկզբունքը անուղղակի կերպով ընդհանուր չափանիշ է, որի ուժով քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտները դրսևորում են ազնիվ, սոցիալապես ընդունելի և ընկալելի վարքագիծ:

Սեզ համար ընդունելի է այն մոտեցումը, որ բարեխղճության սկզբունքը չպետք է ունենա հստակ սահմանում և պետք է լինի գնահատողական կատեգորիա, քանի որ բարեխիղճ վարքագիծը քաղաքացիաիրավական հարաբերություններում գնահատելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել սուբյեկտիվ և բարոյական բազմաթիվ տարրեր, որոնք տարբեր անձանց կողմից այլ կերպ են ընկալվում, և հաշվի առնելով այն, որ բարեխղճությունն ըստ էության այս կոնտեքստում կապված է ոչ միայն իրավական, այլ նաև բարոյական նորմերի հետ, ապա հստակ սահմանում տալը խիստ կսամանափակի արդարադատություն իրականացնող սուբյեկտին՝ փաստական հանգամանքները բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտություն իրականացրած լինելու արդյունքում, վարքագծին իրավական ճիշտ գնահատական տալու համար:

Նշվածը հիմնավորվում է նրանով, որ բարեխղճության սկզբունքը ունի շատ տարբեր չափորոշիչներ՝ կախված նրանից, թե ինչ բնույթի իրավահարաբերություններ են, և ովքեր են իրավահարաբերության սուբյեկտները:

Ընդ որում, բարեխղճության սկզբունքը չի կարող նեղ մեկնաբանվել և կիրառվել միայն մեկ իրավունքի ճյուղում, քանի որ դրա իմաստը փոփոխվում է տարբեր ոլորտներում: Երբ մենք բարեխղճություն եզրույթը քննարկման առարկա դարձնենք կորպորատիվ հարաբերությունների համատեքստում, անկասկած պետք է բացահայտվի այն կորպորատիվ իրավահարաբերությունների բնորոշ չափորոշիչների հետ համադրության արդյունքում, որոնք եթե ոչ էապես, ապա մեծամասամբ տարբերվում են քաղաքացիաիրավական հարաբերություններում առկա չափորոշիչներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2024 թվականի օգոստոսի 8-ին թիվ ՏՂ/0574/02/21 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Գործադիր մարմնի ղեկավարի գործողություններով (անգործությամբ) ընկերությանը

¹ Чукреев А.А. Добросовестность в системе принципов гражданского права // Журнал российского права. 2002. № 11. էջ 102-103.

պատճառված վնասը հատուցելու պահանջի իրավունքի ծագման մասին խոսք կարող է գնալ միայն այն իրավիճակներում, երբ գործով ապացուցվում է նաև, որ գործադիր մարմնի ղեկավարի վարքագիծը (գործողությունները կամ անգործությունը) եղել է ոչ իրավաչափ, այն է՝ ի թիվս այլնի՝ ոչ բարեխիղճ, ոչ ի շահ ընկերության կամ ոչ ողջամիտ: Այսինքն՝ գործադիր մարմնի ղեկավարի վարքագիծը ոչ իրավաչափ է համարվում ոչ միայն այն դեպքում, երբ նա ուղղակիորեն խախտել է օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված այս կամ այն պահանջը, այլ նաև այն դեպքերում, երբ նրա՝ որպես իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի վարքագիծը շեղվում է ողջամիտ, բարեխիղճ և ի շահ ընկերության գործելու պարտականություն ունեցող ղեկավարի վարքագծի՝ օրենքով սահմանված չափանիշներից: Ըստ էության, կարելի է փաստել, որ գործադիր մարմնի ղեկավարի վարքագծի անբարեխղճությունը պետք է համարել ապացուցված, մասնավորապես այն դեպքերում, երբ՝

1) իր անձնական և իրավաբանական անձի շահերի միջև բախման առկայության պայմաններում գործադիր մարմնի ղեկավարը գործել է իր անձնական շահերից ելնելով,

2) գործադիր մարմնի ղեկավարը գիտեր կամ օբյեկտիվորեն պետք է իմանար, որ իր գործողությունները (անգործությունը) կատարման պահին չեն բխում իրավաբանական անձի շահերից,

3) գործադիր մարմնի ղեկավարն իրավաբանական անձի մասնակիցներից թաքցրել է իր կատարած գործարքի մասին տեղեկությունները, չի ապահովել դրանց հաշվապահական ձևակերպումը և իր հաշվետվողականությունը կամ մասնակիցներին տրամադրել է գործարքի մասին կեղծ տեղեկություններ,

4) գործարքը կատարվել է առանց իրավաբանական անձի կառավարման մարմինների համապատասխան հաստատման (համաձայնության)¹:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ օրենսդրությունը և դատական պրակտիկան ևս զարգացել են այն ուղղությամբ, որ բարեխղճության սկզբունքին հստակ իրավական սահմանում տալու անհրաժեշտությունը բացակայել է՝ այն գնահատողական կատեգորիա համարելով: Նախկինում, մինչև վկայակոչված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը նման հստակ չափորոշիչների տարանջատում և գնահատման ենթակա պայմանների սահմանում չէր տրվել:

Նշված իրողությունը թույլ է տալիս արձանագրել կորպորատիվ իրավահարաբերությունների զարգացման ներկայիս փուլի մասին, ինչպես նաև այդ իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին:

3. Եզրակացություն

Այսպիսով, կորպորատիվ և քաղաքացիաիրավական իրավահարաբերություններում բարեխղճության սկզբունքը ունի որոշակի նմանություններ, սակայն, ինչպես նշեցինք, առկա են տարբերություններ, որոնք բխում են իրավունքի ճյուղերի առանձնահատկություններից:

Իրավահարաբերությունների բնույթից բխող առանձնահատկություններից կարող ենք առանձնացնել հետևյալները՝

1. Քաղաքացիաիրավական իրավահարաբերություններում բարեխղճությունը ընդհանուր սկզբունք է, և այդ սկզբունքը գործնականում ուղղված է ապահովվելու, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում կողմերը գործեն ազնիվ և չխախտեն այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ կարգավորումները հստակ ամրագրվել են օրենսդրի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և

¹ <https://www.cassationcourt.am/precedent/civil-cases-advanced-search> (էլեկտրոնային հասանելիությունը 09.10.2024 թվականի դրությամբ)

այլ նորմատիվ իրավական ակտերում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարեխղճություն եզրույթը օգտագործվում է պարտավորական իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերով, սեփականության իրավունքին առնչվող որոշ իրավահարաբերություններ կարգավորող իրավանորմերով և այլն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համալիր վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ բարեխղճությունը քաղաքացիաիրավական հարաբերություններում ավելի շատ վերաբերում է իրավունքների իրացման ընթացքում ազնիվ և արդար գործելուն, ինչպես նաև սուբյեկտի դիտավորությանը: Կորպորատիվ իրավահարաբերություններում բարեխղճությունը կապված է կորպորացիայի կառավարման մարմինների գործառույթների իրականացման հետ, որի գնահատման համար ոչ միայն պետք է քննարկման առարկա դարձվի պայմանագրային և այլ տեսակի պարտավորական իրավահարաբերություններում դրսևորված վարքագիծը, այլ նաև որպես չափանիշ պետք է վարքագծի գնահատման համար հիմք ընդունվի կորպորատիվ շահը: Ուստի, կորպորատիվ հարաբերություններում բարեխղճությունը քաղաքացիաիրավական բարեխղճությունից կառուցվածքային տարբերակող հատկանիշը այն է, որ կորպորացիայի կառավարման մարմինները իրենց իրավունքները իրացնելիս և պարտականությունները կատարելիս ոչ միայն պետք է գործեն՝ առաջնորդվելով համապատասխան իրավասությունը սահմանող իրավադրույթներով, այլ նաև պետք է գործեն ի շահ կորպորացիայի:

Նշվածը ավելի պատկերավոր ներկայացնելու համար ստորև քննարկման առարկա դարձնենք այս տարբերությունը օրինակների վրա:

Օրինակ 1՝ կնքվել է հետաձգող պայմանով գործարք, և պայմանի իրականացումը տեղի չի ունեցել տվյալ իրավահարաբերության կողմերից մեկի անբարեխիղճ վարքագծի պատճառով:

Օրինակ 2՝ կորպորացիայի անունից գործարքներ կնքելու իրավասություն ունեցող անձը կնքում է շահութաբեր գործարք ոչ լավ հեղինակություն ունեցող տնտեսավարող սուբյեկտի հետ:

Այսպես, օրինակ 1-ի դեպքում պարտավորական իրավահարաբերություններում պարտականություն ստանձնած անձի կողմից անբարեխիղճ վարքագիծ դրսևորելու արդյունքում խախտվել են մյուս կողմի իրավունքները, իսկ օրինակ 2-ի դեպքում գործարքներ կնքելու իրավասություն ունեցող անձը կատարել է իր պարտականությունները. կնքել է շահութաբեր գործարք, սակայն համապատասխան մարմինը վատ համբավ ունեցող ընկերության հետ գործարք կնքելուց առաջ պետք է պատշաճ քննարկման առարկա դարձներ դրա հետևանքները կորպորացիայի հետագա գործունեության վրա, որի չկատարումը որակվելու է անբարեխիղճ վարքագիծ:

2. Սոցիալական արդարության պատասխանատվության չափանիշները կարևոր տարրեր են ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բարեխղճության, այլ նաև կորպորացիայի կառավարման մարմինների բարեխղճության համար: Քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճությունը դրսևորվում է և/կամ կարող է դրսևորվել գերազանցապես այնպիսի հարաբերություններում, որոնք հիմնականում ծագել են կողմերի փոխադարձ կամահայտնության արդյունքում, և համապատասխան քաղաքացիաիրավական հարաբերություններում անձինք միևնույն պարտավորության կողմեր են: Նման դեպքում բարեխղճությունն ուղղված է լինելու յուրաքանչյուրի իրավունքների պատշաճ իրացմանը և պարտականությունների պատշաճ կատարմանը, որի դեպքում անձը կանխում է ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում պատասխանատվության վրա հասնելու հանգամանքը: Կորպորատիվ բարեխղճությունը, սակայն, ավելի լայն ու բազմաշերտ հասկացություն է, քանի որ այն ենթադրում է ոչ միայն օրենքի հետևողական կատարում, այլ նաև կորպորացիայի, կորպորացիայի կառավարման

մարմինների, կորպորացիայի աշխատակիցների, կորպորացիայի գործընկերների և այլ անձանց հանդեպ սոցիալական և էթիկական պատասխանատվություն:

Այս տարբերությունը վերլուծենք նախորդ կետում բերված օրինակների հիման վրա.

այսպես, օրինակ 1-ի դեպքում կողմերը փոխադարձ համաձայնությամբ և Օրենսգրքով սահմանված կարգով մտել են քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ, որի հիմքով տվյալ իրավահարաբերությունների մի կողմի պարտականությունների խախտումը հանգեցնելու է մյուս կողմի մոտ խախտված իրավունքը վերականգնելու/պաշտպանելու իրավունքի ծագմանը: Օրինակ 2-ի դեպքում քաղաքացիաիրավական հարաբերությունները չեն ծագել փաստացի կորպորացիայի գործադիր մարմնի ղեկավարի և կորպորացիայի բաժնետիրոջ միջև, սակայն գործադիր մարմնի ղեկավարի անբարեխիղճ վարքագծի դեպքում կորպորացիայի բաժնետիրոջ մոտ ծագելու է վնասի փոխհատուցման իրավունք:

3. Քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճությունը գնահատելիս առանցքային դեր ունի սուբյեկտի դրսևորած վարքագծի բարոյական և հասարակության կողմից ընկալելիության աստիճանը, իսկ կորպորացիայի կառավարման մարմինների կողմից բարեխիղճ վարքագիծը գնահատելիս առանցքային դեր ունի այն գնահատականը, թե որքան է վարքագիծը բխել կորպորացիայի շահերից:

Տարբերությունը կրկին քննարկման առարկա դարձնենք մեր կողմից բերված օրինակ 1-ի և օրինակ 2-ի համատեքստում:

Այսպես, օրինակ 1-ի դեպքում կողմը խոչընդոտել է պայմանի կատարումը, օրինակ՝ դրսևորելով հասարակության կողմից անընդունելի վարքագիծ, իսկ օրինակ 2-ի դեպքում գործադիր մարմնի ղեկավարի կողմից գործարքը կնքվել է առանց համապատասխան շրջահայացության:

THE PRINCIPLE OF GOOD FAITH IN CORPORATE LEGAL RELATIONS

Martin Khachikyan

PhD student at the YSU Chair of Civil Law

"BLC GROUP" LLC senior associate, attorney

martin.khachikyan@ysu.am

ORCID - 0009-0007-3262-0326

Abstract. Good faith in corporate legal relations is a fundamental principle that ensures transparency and fairness in the process of effective realization of the corporation's interests.

This principle is important not only for legal relations, but also for the protection of the corporation's interests.

Good faith in the corporate world includes various components: honesty, responsibility, equality and the rule of law, and the concept of good faith in corporate activities is not limited only to following laws and rules, but is also aimed at preserving corporate culture and corporate interests. By maintaining good faith, companies can avoid abuse, fraud and illegal activities.

Good faith also ensures the moral authority of the organization and brings about reforms in its work. The need to give a correct legal assessment of the behavior of entities acting in corporate legal relations has become more urgent than ever, which is currently due to the rapid development of the corporate governance culture and

current trends in the development of global economic relations. Moreover, the analysis of judicial practice also indicates the need to give a correct legal qualification to corporate disputes, including unscrupulous behavior by corporate management bodies.

Key words: *legal entity; good faith; dishonest behavior; acting in good faith; corporate governance; corporate legal relations; corporate law.*

ПРИНЦИПА ДОБРОСОВЕСТНОСТИ В КОРПОРАТИВНЫХ ПРАВООТНОШЕНИЯХ

Мартин Хачикян

*Аспирант кафедры Гражданского права ЕГУ
Старший юрист ООО «БИЭЛСИ ГРУП», адвокат
martin.khachikyan@ysu.am
ORCID - 0009-0007-3262-0326*

Абстракт. В корпоративных правоотношениях добросовестность является основополагающим принципом, обеспечивающим прозрачность и справедливость в процессе эффективной реализации интересов корпорации.

Этот принцип важен не только для защиты интересов корпорации.

Добросовестность в корпоративном мире включает в себя различные составляющие: честность, ответственность и законность, а понятие добросовестности в корпоративной деятельности не ограничивается соблюдением законов и правил, но и направлена на поддержание корпоративной культуры и корпоративных интересов. Поддерживая честность, компании могут избежать злоупотреблений, мошенничества и незаконной деятельности.

Необходимость правильной правовой оценки поведения субъектов, действующих в корпоративных правоотношениях, стала как никогда актуальной, что обусловлено стремительным развитием культуры корпоративного управления и современными тенденциями развития мирохозяйственных отношений. Более того, анализ судебной практики также указывает на необходимость дать правильную правовую квалификацию спорам корпоративного характера, в том числе недобросовестным действиям органов корпоративного управления.

Ключевые слова - *юридическое лицо; добросовестность; недобросовестное поведение; действовать добросовестно; корпоративное управление; корпоративные правоотношения; корпоративное право.*